2. ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ (Ներսես Դ Կլայեցի, Ներսես Երգեցող, հունիսի 4, 1102, Հայոց Միջագետք – օգոստոսի 13, 1173, Հռոմկլա, Կիլիկիայի Հայկական թագավորություն), հայ եկեղեցական գործիչ, աստվածաբան, բանաստեղծ, երաժշտագետ, երգահան, պատմիչ, 1166 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս: Իր բազմատաղանդության համար ժամանակակիցները կոչել են *Շնորհալի*:

Ծնվել է Հայոց Միջագետքի Տլուք գավառի Ծովք դղյակում, հոր՝ իշխան Ապիրատ Պահլավունու ազնվական ընտանիքում: Ներսես Շնորհալին Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ծոռն է և Գրիգոր Գ (Փոքր Վկայասեր) Պահլավունու կրտսեր եղբայրը: Իր ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկն է եղել: Ստացել է հիմնավոր կրթություն Կարմիր վանքի դպրոցում՝ եպիսկոպոս Ստեփանոս Մանուկի մոտ: Վախճանվել է 1173 թվականին: Թաղվել է Հռոմկլա ամրոցում: Հայ եկեղեցին նրան դասել է սրբերի շարքը և նրա հիշատակը նշվում է ամեն տարի Թարգմանչաց տոնին:

3. ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆ (փետրվարի 2, 1856, Վաղարշապատ, Երևանի նահանգ, Կովկասի փոխարքայություն, Ռուսական կայսրություն – մարտի 19, 1905 կամ մարտի 6, 1905, Թիֆլիս, Ռուսական կայսրություն), հայ կոմպոզիտոր, խմբավար և մանկավարժ: Մակար Եկմալյանն իր ստեղծագործությամբ ու մանկավարժական գործունեությամբ մեծապես նպաստել է ազգային երաժշտական դպրոցի ձևավորմանը. մշակել է հայկական մոնոդիաների (միաձայն երգեցողություն) բազմաձայնման սկզբունքները, հիմնադրել օրատորիա-կանտատի և ռոմանսի ժանրերը:

4. ԿՈՄԻՏԱՍ (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան, Կոմիտաս վարդապետ, սեպտեմբերի 26 (հոկտեմբերի 8), 1869, Քյոթահիա – հոկտեմբերի 22, 1935 կամ հոկտեմբերի 21 1935, Փարիզ), հայ երգահան, երգիչ, երաժշտական էթնոլոգ, երաժշտագետ, վարդապետ և ուսուցիչ, բանահավաք, խմբավար, մանկավարժ, հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր: 1881-1893 թվականներին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1894 թվականին ձեռնադրվել է աբեղա և ստացել Կոմիտաս անունը: 1895 թվականին Կոմիտասին շնորհվել է վարդապետի հոգևոր աստիճան: 1895-1896 թվականներին Թիֆլիսում կոմպոզիտոր Մակար Եկմալյանի ղեկավարությամբ ուսումնասիրել է երաժշտական տեսական առարկաներ: 1896-1899 թվականներին ուսումը շարունակել է Բեռլինի Ֆրիդրիխ Վիլհելմ արքունի համալսարանում (ներկայումս Հումբոլդի համալսարան) և Ռիչարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում:

Կոմիտասի գիտական և ստեղծագործական գործունեությունը նոր էջ բացեց հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ: Հայ հոգևոր և ժողովրդական երաժշտությանը վերաբերող իր գիտական ուսումնասիրությունները Կոմիտասը ներկայացրել է Եվրոպայի մի շարք քաղաքներում (Բեռլին, Փարիզ, Ժնև, Լոզան և այլն), այդ թվում՝ Միջազգային երաժշտական ընկերության համաժողովներին, որի հիմնադիր անդամներից էր: Կոմիտաս-գիտնականը նպատակ ուներ աշխարհին ներկայացնելու հայկական երաժշտական հարուստ մշակույթի ավանդույթները և ապացուցելու, որ «հայն ունի ինքնուրույն երաժշտություն»: